



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(անհատ ձեռնարկատեր Արտաշես Հարությունյանի 24.01.2017թ.-ի վարչական բողոքը
բավարարելու մասին)

Ք. Երևան

«17» փետրվարի 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ անհատ ձեռնարկատեր Արտաշես Հարությունյանի 24.01.2017թ.-ի բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

Ա/Ձ Արտաշես Հարությունյանը (այսուհետ՝ նաև Ա/Ձ կամ Բողոք բերած անձ) բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գանգատարկման հանձնաժողով)՝ 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 24.01.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ 26.10.2016թ.-ին բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ իր կողմից 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ

վճարող համարվելու հայտարարությունը սահմանված կարգով ներկայացված և իրեն 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարելու վերաբերյալ:

Գանգատարկման հանձնաժողովի 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշմամբ գանգատը մերժվել է:

Բողոք բերած անձը որպես բողոքի փաստական և իրավական հիմքեր նշել է, որ 12.01.2015թ.-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր (ՀՎՀՀ 80524039): Արաբկիրի հարկային տեսչությունում 13.02.2015թ.-ին լրացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, որից հետո 2015թ. չորս եռամսյակների և 2016թ. 1-ին և 2-րդ եռամսյակների համար հարկային տեսչություն է ներկայացրել շրջանառության հարկի հաշվարկներ:

2016թ.-ի օգոստոսին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից Ա/Ձ-ն ստացել է ծանուցագիր՝ 2016թ.-ի 2-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու և դրանից բխող վարչական պատասխանատվության մասին, մինչդեռ ըստ Բողոք բերած անձի ինքը չի համարվել ԱԱՀ վճարող անձ:

Հարկային մարմնի կողմից պարզաբանվել է, որ Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Ըստ Բողոք բերած անձի, ելնելով այն հանգամանքից, որ Ա/Ձ-ն հարկային տեսչության կողմից չի ծանուցվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետի մասին, որպիսի պարագայում «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-128-Ն ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն չի գործում «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վերջնաժամկետը, ինքը փոստային առաքման միջոցով հարկային տեսչություն է ներկայացրել 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու հայտարարություն, որի ընդունումը մերժվել է հարկային տեսչության կողմից:

Մասնավորապես, հարկային մարմինը տեղեկացրել է, որ 26.02.2015թ.-ին հարկային տեսչության կողմից փոստային առաքմամբ ուղարկվել է շրջանառության հարկ

վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագիրը, որը, ըստ Բողոք բերած անձի, ինքը չի ստացել:

«Հայփոստ» ՓԲԸ-ից պահանջված տեղեկատվության արդյունքում, ըստ Բողոք բերած անձի, պարզվել է, որ նման փաստաթուղթ փոստային բաժանմունքում ստացվել է և ըստ վերջիններիս արխիվային փաստաթղթերի, հանձնվել է հասցեատիրոջը, սակայն գտնում է, որ Երևանի թիվ 0051 փոստային բաժանմունքի գրքի համապատասխան էջի պատճենի վրա առկա ստորագրությունը պատկանել է իր կնոջը կամ աղջկան, ովքեր իրեն չեն հայտնել ծանուցման մասին:

Բողոք բերած անձը հայտնել է նաև, որ Գանգատարկման հանձնաժողովն անտեսել է հարկային մարմնի ծանուցագիրը ստացած չլինելու վերաբերյալ իր կողմից ներկայացված փաստական հիմքը, ինչպես նաև իրեն հեռախոսով տեղեկացրել են Գանգատարկման հանձնաժողովի նիստը հետաձգելու և 2016թ. նոյեմբերի 23-ին կայանալու մասին, սակայն որոշումն ընդունվել է 22.11.2016թ-ին:

Վերոգրյալի հիման վրա՝ հայտարարելով այն մասին, որ հարկային մարմնի գործողություններն իրավաչափ են եղել, Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշումը, սահմանված կարգով ներկայացված համարել 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը և 01.01.2016թ.-ից իրեն համարել շրջանառության հարկ վճարող:

Ի հիմնավորումն իր բողոքի Բողոք բերած անձի կողմից որպես նախադեպային ներկայացվել է Գանգատարկման հանձնաժողովի 14.07.2015թ.-ի թիվ 28/5 որոշումը:

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի փետրվարի 17-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր Ա/Ձ Արտաշես Հարությունյանը և վերջինիս լիազորված անձ Երվանդ Ֆրանգուլյանը:

Բողոք բերած անձը լսումների ընթացքում հայտնեց, որ պնդում է իր կողմից ներկայացված բողոքը, գտնում է, որ իր պատշաճ ծանուցված չլինելու պարագայում իր կողմից ներկայացված հայտարարությունը՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, ենթակա էր ընդունման հարկային մարմնի կողմից:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- Արտաշես Հարությունյանը 12.01.2015թ.-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր (ՀՎՀՀ 80524039): ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի համաձայն, բողոք բերած անձի հաշվառման, բնակության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեները նույնն են, այն է՝ Կոմիտասի պողոտա 47/1 շենք, 2 բնակարն, Արաբկիր 0051, Երևան, Հայաստան:

- Ա/Ձ Արտաշես Հարությունյանին ուղղված ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչության 15.09.2016թ. թիվ 7177 գրությամբ Ա/Ձ-ն տեղեկացվել է, որ իր կողմից փոստային ծառայության միջոցով 31.08.2016թ. Արաբկիրի հարկային տեսչությանը ներկայացված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը համարվում է չընդունված, քանի որ հայտարարությունը ներկայացվել է դրա համար սահմանված ժամկետի խախտմամբ: Նշվածի արդյունքում, ըստ հարկային տեսչության, չընդունված են համարվել նաև 06.09.2016թ. փոստով ներկայացված 2016թ. 1-ին և 2-րդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկները, քանի որ Ա/Ձ-ն ի սկզբանե չի դիտարկվում որպես շրջանառության հարկ վճարող: Հարկային տեսչության նշված գրությամբ Ա/Ձ-ն տեղեկացվել է նաև, որ շրջանառության հարկ վճարող համարվելու ծանուցագիրը հարկային տեսչության կողմից ուղարկվել է դեռևս 26.02.2015թ.-ին՝ թիվ 171494721 կոդով:

- «Հայփոստ» ՓԲ ընկերության 23.09.2016թ. թիվ 2/3-286 գրության համաձայն, թիվ RR171494721AM պատվիրված նամակը՝ հասցեագրված Արտաշես Հարությունյանին, ՀՀ ք. Երևան, Կոմիտասի պող., 47/1 շ., 2 բն հասցեով, «Հայփոստ» ՓԲԸ Երևանի թիվ 0051 փոստային բաժանմունք ստացվել է 27.02.2015թ.-ին և արխիվային փաստաթղթերի հիման վրա 27.02.2015թ.-ին հանձնվել է հասցեատիրոջը: Գրությանը կից ներկայացված «Հայփոստ» ՓԲԸ Երևանի թիվ 0051 փոստային բաժանմունքի Ձև-8 գրքի համապատասխան էջի պատճենի վրա առկա է ստորագրություն՝ «Арутюнян» ազգանվան դիմաց:

- Գործի նյութերում առկա է Արաբկիրի հարկային տեսչություն 19346 համարով 01.09.2016թ. մուտքագրված շրջանառության հարկ վճարող համարվելու մասին հայտարարություն՝ ստորագրված Արտաշես Հարությունյանի կողմից:

- Գործի նյութերում առկա է 01.09.2016թ. «Ծանուցագիր» վերտառությամբ փաստաթուղթ՝ ուղղված Ա/Ձ Արտաշես Հարությունյանին, որով վերջինս տեղեկացվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ժամկետում 2016թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկը չներկայացնելու մասին, որի առնչությամբ Ա/Ձ-ն հրավիրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավախախտման մասին արձանագրության կազմմանը մասնակցելու համար:

- Ա/Ձ Արտաշես Հարությունյանը 26.10.2016թ. բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով՝ իր կողմից 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու հայտարարությունը սահմանված կարգով ներկայացված և իրեն 01.01.2016թ.-ից շրջանառության հարկ վճարող համարելու վերաբերյալ:

- Գանգատարկման հանձնաժողովի 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշմամբ Արտաշես Հարությունյանի գանգատը մերժվել է՝ որպես հիմնավորում դիտարկելով վերջինիս ծանուցված լինելու և սահմանված ժամկետում շրջանառության հարկ վճարող չհամարվելու փաստերը:

- Ի հիմնավորումն բողոքի, Բողոք բերած անձի կողմից ներկայացվել է Գանգատարկման հանձնաժողովի 14.07.2015թ.-ի թիվ 28/5 որոշումը, համաձայն որի՝ Գանգատարկման հանձնաժողովը բավարարել է Ա/Ձ Արա Ստեփանյանի միջնորդությունն իրեն 2015թ.-ի շրջանառության հարկ վճարող համարելու վերաբերյալ, քանի որ հաստատված է համարել այն հանգամանքը, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետի ծանուցագիրը Արա Ստեփանյանը չի ստացել իրենից անկախ հանգամանքներում: Նշված վարույթի փաստական հանգամանքների համաձայն, Ա/Ձ Արա Ստեփանյանին հարկային մարմնի ծանուցումն ուղարկվել է Ռ.Մելիքյան 67 հասցեով և հանձնվել այնտեղ բնակվող այլ անձի, այն դեպքում, երբ Ա/Ձ Արա Ստեփանյանը հաշվառված է եղել Վ. Հասրաթյան 6 շ., բն 16 ա հասցեում, բնակվել է Եր. Քոչարի 13 շ., բն. 119 հասցեում, իսկ առևտրային գործունեությունն իրականացրել է Նար-Դոսի փող., 113/2 հասցեում:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Նախ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Բողոք բերած անձի կողմից ի հիմնավորումն ներկայացված բողոքի մեկ այլ՝ Ա/Ձ Արա Ստեփանյանի վերաբերյալ գանգատարկման վարույթի շրջանակներում Գանգատարկման հանձնաժողովի կայացրած 14.07.2015թ.-ի թիվ 28/5 որոշման կիրառելիությանը սույն բողոքի շրջանակներում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ վարչական մարմնի կողմից անհավասար մոտեցում ցուցաբերելու արգելքի պահպանման տեսանկյունից:

Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի 14.07.2015թ.-ի թիվ 28/5 որոշմամբ սահմանված փաստական հանգամանքները նույնական չեն սույն վարույթի շրջանակներում քննվող փաստական հանգամանքներին, քանի որ Ա/Ձ Արա Ստեփանյանի վերաբերյալ գանգատարկման վարույթի շրջանակներում ապացուցված է եղել վերջինիս կողմից փաստացի ծանուցված չլինելու հանգամանքը՝ պայմանավորված Ա/Ձ Արա Ստեփանյանի բնակության և գործունեության վայրերը ուղարկված ծանուցման վայրի հետ ուղղակիորեն չհամընկնելու փաստով:

Որպես բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Բողոք բերած անձի՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-128-Ն ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագրի ստացած չլինելու վերաբերյալ փաստարկին և դրա հիմնավորվածությանը քննարկվող վարչական վարույթի շրջանակներում:

Վերոհիշյալ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1-ին կետով նախատեսված՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ **հայտարարություն**

ներկայացնելու վերջնաժամկետը կիրառվում է միայն այն դեպքում, եթե հարկային մարմինը հարկ վճարողին ծանուցել է սույն օրենքով նման վերջնաժամկետ սահմանված լինելու մասին: Եթե հարկային մարմինը սույն մասով նախատեսված ծանուցումը հարկ վճարողին ուղարկում է սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված ժամկետներից հետո, ապա որպես շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետ սահմանվում է հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը:

Հանձնաժողովը նկատի ունենալով այն փաստը, որ Բողոք բերած անձի կողմից թե՛ Գանգատարկման հանձնաժողովին ներկայացված գանգատի, թե՛ Հանձնաժողովին ներկայացված բողոքի շրջանակներում չի վիճարկվել հարկային մարմնի կողմից ծանուցագիրն ուղարկելու, ինչպես նաև համապատասխան բովանդակություն ունենալու հանգամանքը, ապացուցման է ենթակա միայն նշված ծանուցագիրը Բողոք բերած անձի կողմից ստացած չլինելու փաստը և դրա քննությունը Գանգատարկման հանձնաժողովի կողմից:

Գանգատի ուսումնասիրությունից հետևում է, որ վերոհիշյալ փաստարկը Բողոք բերած անձի կողմից ներկայացված է եղել նաև Գանգատարկման հանձնաժողովին ուղղված գանգատում, որի առնչությամբ սակայն Գանգատարկման հանձնաժողովի 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշմամբ որևէ անդրադարձ կատարված չէ:

Վերոգրյալի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման պահանջը, որի արդյունքում վարչական մարմինը պարտավոր էր բացահայտել գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անհատ ձեռնարկատեր Արտաշես Հարությունյանի 24.01.2017թ. բողոքը բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 22.11.2016թ.-ի թիվ 35/2 որոշումը և կայացնել նոր վարչական ակտ՝ հետևյալ բովանդակությամբ. «Անհատ ձեռնարկատեր Արտաշես Հարությունյանի գանգատը բավարարել. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությանը 31.08.2016թ. Ա/Ձ Արտաշես Հարությունյանի կողմից ներկայացված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը համարել ժամկետում տրված, և Ա/Ձ Արտաշես Հարությունյանին 2016թ.-ի ժամանակահատվածի համար ճանաչել շրջանառության հարկ վճարող»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ